ԵԶԻԴ ԱՂՋԻԿԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

I

Սինակի լեռներում ապրող Ջալալցի և եզիդ քիւրդերը որոնք, որպէս յայտնի է, մահմեդականների մի առանձին աղանդ են կազմում և դևերի են հաւատում, միմեանց հետ թշնամացել էին։ Արիւնի խնդիր կար, որ արիւնով պէտք է լուծուէր։ Ջալալցին քաշւում էր եզիդների գիւղերը գալու և եզիդը չէր վստահանում անցկենալու Ջալալցիների արօտները։

Մի այդպիսի ժամանակ՝ ոչ ոք չէր կարծիլ թէ Ջալալցի Ամօն, որ յայտնի էր իբրև ոգևորուած թշնամի և որին եզիդները կատաղութեամբ կը խեղդէին—եթէ իրանց ձեռքն ընկնէր նա, կը վստահանայ միայնակ երևալ եզիդի գիւղերի մօտերքը։

Ամօն ջահիլ տղայ էր՝ քսաներկու տարեկան, միջակ հասակով, ամուր երկաթեայ կազմուածքով. գիտէր նշան դնել և գնդակի հարուածներում՝ շատ քիչ սխալուել։ Նա մանկութիւնից լսել էր, որ ճարպիկ պատերազմող Ջալալցին, եթէ ձի հեծնելու մէջ էլ կատարեալ լինէր, չէր ունենալ հաւասարը քիւրդ ցեղերի մէջ, ուստի նա դորձ դրաւ ձի հեծնելու մէջ հասնել կատարելագործութեան և հասաւ։ Նա իւր վարժ ձիարշաւով և ճիշդ նշան դնելով հազուադիւտ ջահիլներից մէկն էր Սինակի լեռներում։

Ամօին գրաւել էր եզիդ Շարօի գեղեցիկ աղջիկը՝ Խանէն, որի գովասանքը ամբողջ երկու տարի է պտտում էր վրանաբնակների շրջանում։ Ի հարկէ Խանէին օրինաւոր կերպով ձեռք բերելը անհնարին էր։ Բացի այն թշնամութիւնից, որ ընկել էր երկու հարևանների մէջ, կար մի աւելի մեծ արգելք՝—դա կրօնի զանազանութիւնն էր։ Եզիդը երբէք չի համաձայնիլ իւր աղջկան մահմեդականի կին տեսնել։

Ամոն փորձ էլ չէր անում օրինաւոր միջոցների դիմել։ Նա ոչ ոքի խորհրդի էլ չէր դիմում, երկիւղ կրելով, որ մի գուցէ ուրիշի ախորժակն էլ բանայ՝ Խանէի ետևից ընկնելու։ Նա՝ թէև լաւ հաւատացած էր, որ իւր հակառակորդներին կը յաղթէր բոլորին, բայց նա չէր կամենում թշնամիներ ունենալ և՛ եգիպտների և՛ իւր ցեղակից ջալալցիների մէջ։

Օգոստոսի մէջերքն էր։ Եգիպտները զբաղւած էին հունձով։ Նարօի աղջիկը՝ երկու ուրիշ աղջիկների հետ՝ հեռացել էին կէսօրից յետոյ գիւղից դէպի մարգագետինը՝ աթար ժողովելու։ Նոքա չը գիտէին՝ թէ նոցա բոլոր շարժումներին հետևող կայ մոտակայ քարանձաւից։ Ամոն թաքնւած նայում էր աղջիկներին։ Սա առաջին անգամը չէր, որ նա եկել էր իւր բաղդը փորձելու։ Այսօր նա վերջապէս տեսնում էր իրան բաղդաւոր, մօտեցած իւր նպատակին։

Աղջիկները ցրւեցին դանդաղ կողմ։ Ամոն դողաց ուրախութիւնից։ Նա սկսեց՝ իբրև խելագար՝ դիտել իւր զոհը։ Խանէն անհոգ նայում էր չորս կողմը. բարձրանալով մի քարի վերայ՝ նա տեսաւ, որ իւր ընկերուհիները, թէև հեռացել են, բայց անտեսանելի չեն։ Հանգստացած՝ նա սկսեց իջնել դէպի փոքրիկ գետակը։ Ամոնի աչքերը լայն բացւեցին—հետևելու Խանէի գլխի կամաց-կամաց անհետանալուն։ Երբ նա համոզւեց, որ Խանէն չէ տեսնում ոչ ոքի այլ և ս, իջաւ շտապով սարի խորշից՝ քաշելով իւր ետևից ձին և յետոյ յարմար տեղում՝ նստելով ձին՝ արագընթաց մօտեցաւ այն գետակին, դէպի որը գնաց Խանէն։

Մինչև Ամոնի երևալը, թէև բաւականին ժամանակ տևեց, այնու ամենայնիւ՝ Խանէն զարմացաւ, տեսնելով յանկարծ քիւրդ ձիաւորին։ Խանէն սկզբում վատ կասկած չ՝տարաւ, որովհետև ձիաւորը երևում էր մի ինչ որ իւր բանի համար շտապով առաջ գնացող։ Յանկարծ Ամոն ձին կանգնացրեց և հարցրեց աղջկան.

—Աղջի, ուրիշ ձիաւոր չը տեսա՞ր այստեղից անցնող։

—Ո՛չ, պատասխանեց ամաչելով աղջիկը։

—Բեռնած եզներ էլ չը տեսա՞ր։

—Ո՛չ։

—Ուրեմն, դեռ չեն անցկացել, դեռ կը գան։ Աղջի՛, ինչ սիրունն ես, դու ո՞ւմ աղջիկն ես։

Խանէն լռեց. դեռ ոչինչ չը կասկածեց։ Ամոն չը կարողացաւ ձին շատ մօտ քշել Խանէին, որովհետև սա ճահճի ափին էր կանգնած. նա հնարներ էր մտածում աղջկան իւր մօտ գրաւելու։ Ի՞նչպէսանի. ժամանակը թանդ է։

—Աղջի, մէկ յանձնարարութիւն ունեմ ձեր գիւղում, ինձ կօգնե՞ս։ Այս բանալիքը պէտք է տամ ձեր գիւղի տանուտէրին՝ Կօրօին։

Աղջիկը զարմանքով նայեց ձիաւորի վերայ ու ամաչելով երեսը շուռ տուեց։ Կօրօն նորա հօրեղբայրն էր։ Բայց աղջկայ միջոցով յանձնարարութիւն անելը ընդունուած բան չէր. ուստի Խանէն սկսեց քաշուել անծանօթի ներկայութիւնից և անհանգստութեան մէջ ընկնել։

—Աղջի, գու հօ Նարօի աղջիկը չե՞ս։ Հա։ Ես քո հօր լաւ ծանօթն եմ։ Դու որ ասես նորան թէ տեսար Ղօնդաղսազից եկած ձիաւորին՝ նա կիմանայ թէ ով եմ։ Ես շեյխի հետ եմ մանգալիս։

Խանէն հետաքրքրուեց։ Ղօնդաղսազ գիւղի մասին նա լսել էր, շեյխերը մի երկու շաբաթ առաջ գիւղերը պատում են եղել։ Այդ բոլորը ճշմարտութեան նման էր։

—Եկ, աղջի, այս բանալիքը վեր առ. ես ճանապարհ ունեմ գնալու. մէկ էլ ձեր գիւղը չը մտնեմ. ասաց փաղաքշանքով ձիաւորը։

Խանէն ձանձրացել էր ձիաւորից. նա ամենևին մտադրութիւն չուներ յանձնարութիւններ ընդունելու նորանից. բայց մտածում էր, որ մի կերպ ազատուի այդ աներես ձիաւորից, որ հակառակ ընդունուած սովորութեան՝ չափազանց երկայն խօսակցութիւն է սկսել օտար աղջկայ հետ։ Ուստի վճռեց առնել բանալիքը և վերջ դնել այս անյարմար խօսակցութեան։ Նա մի քանի քայլ արաւ դէպի ձիաւորը։ Ամոն հէնց այդ բանին էր սպասում, որ աղջիկը հեռանայ այն ձանձրացած փոսից, որի մի անկիւնում նա կանգնած էր։ Ամոն ինքն էլ ձին ծռեց դէպի աղջիկը, մօտեցաւ նորան. բայց յանկարծ մի զարմանալի արագութեամբ և ճարպիկութեամբ նա բռնեց աղջկայ մարմինը և դէպի ինքը քաշելով՝ բարձրացրաւ նորան ու դրաւ ձիու վերայ։ Ձին երերուեց և քիչ էր մնացել, որ Ամոն իւր որսով ընկնէր գետին, բայց Ամոի վայրենի քացին զգաստացրաւ ձիուն և սա մի այնպիսի ոստիւնով առաջ ցատկեց ու վազեց, որ այլ ևս անյաջողութեան մասին խօսք լինել չէր կարող։

Խանէի համար դէպքը այնքան անսպասելի էր, որ նա բոլորովին

սարսափած՝ չը գիտէր թէ ինչ անէր։ Նա փորձեց աղաղակելու. բայց Ամօի ձեռքը ծածկեց նորա բերանը։ Նա շարժումներ արաւ ազատուելու Ամօի ամուր ձեռքերից և գետին թռչելու. բայց ի զուր։ Եւ ինչպէս նա գետին թռչէր արագընթաց ձիու արշաւելու ժամանակ։ Ամօն նորան սկսեց քաղցր խօսքերով հանգստացնել. հաւատացնելով, որ նա բարեկամ մարդու ձեռքում է։

—Քո հայրը ինձ սիրում է. քո հայրը սպասում էր այս բանը. նա, որ լսի քեզ իմ ձեռքով փախցնելը, կ'ուրախանայ. էգուց մարդ կ'ապպարեմ հօրդ մօտ, որ միամիտ լինի իւր աղջկայ կողմից։ Կօրօն ինքը ինձ հետ տեսնուելու հարկաւորութիւն ունի։ Նա ինձնից լաւ փեսայ ո՞ւրտեղ կը ճարէր. ձեր գիւղի աղջիկները բոլորը քեզ երանի պէտք է տան...

Խանէն՝ թէև չէր կամենում լսել Ամօի խօսքերը՝ բայց ակամայ ունկնդիր էր նորա հանգստացնող հաճոյախօսութեան։ Նա հաւատում էր այն բանին, որ նորան յափշտակողը նորա հօր և հօրեղբօր լաւ ծանօթն է. բայց չէր համոզւում, որ նոքա ուրախ լինէին իրանց աղջկայ այդ տեսակ յափշտակուելուն, որովհետև նա լաւ գիտէր, որ իրանց գիւղի մի քանի տղերք աչք ունէին նորա վերայ։ Խանէն աշխատում էր մտաբերել, ինչ որ երբ և իցէ լսել էր Ղօնդաղսազցիների մասին. նա յիշեց, որ նորերս սոցա գիւղից ուղեկիցներ էին պահանջում Միջագէտքից եկած շեյխերին Ղօնդաղսազ առաջնորդելու. նա յիշեց նոյնպէս մի գեղեցկատեսիլ Սօուխբուլաղցի երիտասարդի, որ եկել էր՝ ինչպէս ասում էին՝ Դարաչիչագի կողմերից։ Բայց թէ ով էր նորան յափշտակողը՝ ոչ մի կերպ չը կարողացաւ իմանալ. իսկ հարցնել ոչ մտագիր էր և ոչ էլ կը ցանկանար։

Ամօն մի այնպիսի ուրախութեամբ քշում էր ձին, որ տեսնողը կը կարծէր՝ թէ նա ամենաերջանիկ մարդն է այս աշխարհում։ Նա չէր զգում իւր բեռի ծանրութիւնը. բռնած էր Խանէին երկու ձեռքով, իբրև երեխայի, և միևնոյն ժամանակ հմուտ կերպով ղեկավարում էր ձին։ Ժամանակ ժամանակ նա նայում էր Խանէի երեսին և ամեն անգամ հիացմունքից խելագարւում էր։ Իսկապէս հազւագիւտ գեղեցիկներից էր Խանէն։ Նա ունէր իւր թեթև թխագոյն երեսի վերայ երկու սև արտայայտիչ աչքեր, որոնք բոլորած երկայն, մետաքսեայ արտևանունքներով տալիս էին աղջկայ

հայեացքին մի զարմանալի խորութիւն։ Երեսի մեծութեան հետ համեմատած՝ գուցէ փոքր ինչ քիթը մեծ երևար. բայց նա կանոնաւոր դծուած էր. իսկ փոքրիկ բերանը և զուարթ կարմիր շրթունքները փոքր ինչ դուրս ընկած ծնօտի հետ՝ տալիս էին նորա առոյգ և թարմ երեսին մեծ գրաւչութիւն։ Ամօն չէր հաւանում միայն նորա տխրութիւնը և նորա բարկացած դէմքը։

Բայց ահա Խանէն փոքր ինչ հանդարտուեց, բարկութիւնը մեղմեց և սկսեց մէկ-մէկ նայել նորա վերայ։ Ամօն այնպէս էր ձևացնում իրան՝ թէ չէ տեսնում Խանէի հայեացքները. բայց աղջկայ մի երկայն, դիտող հայեացքի ժամանակ՝ նա յանկարծ նայեց Խանէին և կրակոտ համբոյրների մի փունջ դրօշմեց նորա երեսին։ Խանէն աշխատեց ընդդիմանալ. բայց անզօր եղաւ։ Համբոյրները ուժեղ, ոգևորուած կերպով՝ դիպչում էին նորա թշերին, ճակատին, աչքերին։ Խանէն ընկճուեց, անձնատուր եղաւ իւր նուաճողին. նա սկսեց զգալ հաճոյք և հաշտուեց իւր վիճակի հետ։

Ամօի ֆեսի շուրջը պատած շորի թելաւոր երկայն վերջաւորութիւնները՝ թափուած ճակատի և երեսի վերայ՝ տալիս էին նորա ողորկ թուխ երեսին՝ քաջի տպաւորութիւն։ Խանէն չէր կարողանում դիմանալ նորա խոշոր աչքերի սուր հայեացքին։ Այդ աչքերի մէջ սիրոյ հետ միասին՝ երևում էին ծայրահեղ կատաղութեան նշաններ։

Ամօն յետ էր նայում երբեմնապէս՝ համոզելու թէ հալածողներ արդեօք չը կան. և թէև չէր տեսնում դեռ ոչ ոքի, այնու ամենայնիւ նա հաւատացած էր, որ նա հեշտ չի ազատուիլ եղիդներից։ Նա աշխատում էր այնքան առաջ գնալ, որ բոլորովին ընկնի Ջալալցիների երկրի սահմանը՝ մինչև մութ ընկնելը։ Արեգակը արդէն մօտ էր մայր մտնելուն։ Նա քշում էր ձին անդադար։ Խեղճ կենդանին քրտնքի մէջ խաշուում էր. բայց քայլը չէր պակասցնում. նա զգում էր, որ իւր տէրը չի ներիլ նորան՝ մի այդ սեսակ թուլութիւն և ինքն իրան սպանում էր։

Ամօն բարձրացաւ մի սարի գագաթ, որտեղից արդէն սկսում էր երկու ցեղերի սահմանը։ Նա յետ նայեց. հեռու՝ գիւղերի մօտը՝ տեսաւ մարդկանց խմբեր, նկատեց գիւղից հեռացող մի քանի ձիաւորներ. ոչինչ չ'ասաց գերի ընկած աղջկան՝ և շարունակեց իւր

ճանապարհը։ Մի տեղ զառիվայրը շատ մեծ էր. ձին դժուարանում էր գնալ։ Նա իջաւ ձիուց, առաւ իւր կռնակը աղջկան և սկսեց վազել, քաշ տալով իւր ետևից ձիուն, Խանէն զարմանում էր Ամօի ուժին։ Նա սկսեց խղճալ երիտասարդին և առաջին անգամ բացեց իւր բերանը.

—Թող ես ինքս ոտքովս գնամ. քեզ համար դժուար է։

—Ինձ խղճո՞ւմ ես, սիրուն ջէյրան. դէ՛հ օգնիր, որ այդպէս է։

Ամօն վայր դրաւ Խանէին, բռնեց նորա ձեռքից և սկսեց իջնել։ Նա մենակ չէր թողնիլ աղջկան, լաւ իմանալով, որ նորա ոտքերը կարող էին և ուրիշ ճանապարհով ընթանալ։ Միմեանց ձեռք բռնած՝ նոքա բաւական իջան և հասան մի լաւ ճանապարհի։ Ամօն առաջարկեց, որ նորից ձի նստեն։ Խանէն լաստ երևութին հաշտուել էր իւր նոր գրութեան հետ։

—Խանէ, ջանիդ մատաղ. ինձ հաւատա, որ քեզ կը պաշտպանեմ. ես քեզ սիրում եմ. դու իմ կնիկը պէտք է լինես... իմ անունս Ամօ է... մեր պատկը առանց քո հոր չի լինիլ։

Խանէն զարմացաւ, որ Ամօն նորա անունը գիտէ, բայց մտաբերեց, որ Ամօն ծանօթ է նորա հոր և հօրեղբօր հետ և կարող էր մի կերպ և նորա անունը իմացած լինել։ Խանէն համաձայնուեց նստել գաւակը։ Ամօի կռները այժմ ազատուեցին և նա ազատ կառավարելով ձին՝ քշեց նորան ծուռումուռ ճանապարհներով մինչև մի ձոր, ուր գիշերը վերայ հասաւ։

Ամօն լաւ գիտէր ճանապարհները. նա մթութեան մէջ առաջ էր գնում այնպէս, որ կարծես թէ բոլոր ուղիները լուսաւորուած լինէին։ Վերջապէս նա հասաւ մի փոքրիկ տափարակի, որի մի անկիւնում երևաց ճրագի լոյս։ Ամօն սկսեց հանդարտեցնել ձին և մի երկու շնորհակալական հարուածներ տուաւ նորա վզին։ Աղջիկը այնպէս ամուր բռնել էր Ամօի իրանը, որ կարծես իւր ազատչին է գրկել։ Ամօն զգում էր գեղեցկուհու ձեռքերից կազմած գօտիի կապը և իրան երջանիկ էր համարում։

—Խանէ՛, մենք այստեղ, այս ճրագ երևացող վրանում, կ՝անցկացնենք գիշերը, իսկ էգուց՝ կը տանեմ քեզ իմ վրանը։

—Դուք դեռ գիւղը չէ՞ք իջել, հարցրեց աղջիկը՝ վրդովուած ձայնով։

Նա կարծում էր՝ թէ Ամոն եզիդ է. ուստի սպասում էր գիւղ հասնելու։ Եզիդները՝ թէև ժամանակաւոր վրան են բացանում իրանց արօտներում. բայց օգոստոսին սկսում են տուն դառնալ։ Ճշմարիտ է՝ զարազուլցի եզիդները Թափուականի նման են և վրաններում են ապրում. բայց Խանէն նոցա չը մոաբերեց, որովհետև Ամոն իւր ձին քշեց հակառակ կողմը։ Ամոն, թէև չը հասկացաւ Խանէի վրդովմունքի պատճառը. բայց նորա երկիւղը զգաց, ուստի հանգստացրաւ նորան։

—Մենք դեռ չենք իջել մեր գիւղերը։

—Ինչո՞ւ։

—Դեռ խոտ շատ կայ սարերում։

—Ամո, մենք որտեղ ենք եկել, ուր ենք գնում։ Մենք Ջիվանլուի կողմերումը չե՞նք, մենք Ղարանլուխի ձորումը չե՞նք։

Ամոն այդտեղ հասկացաւ, որ Խանէն կարծում է եղել՝ թէ նա Եզիդստանումն է, Թաքեալթու լեռների սնտերքը։ Նա չ՚ուզեց առ այժմ գաղտնիքը բանալ և տուաւ մի անորոշ պատասխան։

—Մատ ենք քո ասած տեղերին։

—Սա ում վրանն է, հարցրեց Խանէն ճնշուած ձայնով։

—Սա իմ ծանօթի վրանն է, լաւ մարդիկ են։ Դու հանգիստ կաց. քեզ վերայ ծուռ նայող չի լինիլ։

Խանէն մինչև այդ ժամանակ հանգիստ էր. ձիու արագ շարժելը, ապաստարանի բացակայութիւնը, ճանապարհների օձապտոյտները մի տեսակ զբաղեցրել, հանգստացրել էին։ Այժմ երբ մօտենում էր հանգստութեան, իջևանելու, նոր մարդկանց հանդիպելու ժամը— Խանէն սկսեց վրդովմունքի մէջ ընկնել և կորցնել իրան։ Ամոի խօսքերը այլ ևս անզօր էին նորան հանգստացնելու։

II

Խանէի ծնողները. շուտ չ՚իմացան իրանց աղջկայ տեղը։ Նոքա լրտեսներ ուղարկեցին և ջալալցիների, և գեալթուրցիների և զարազուլցիների և հարևան եզիդների մէջը։ Սկզբում լուր եկաւ՝ թէ նորա աղջկան տեսել են Դահօլում. բայց մանրամասն հետամուտ խուզարկութիւնից յետոյ՝ ոչինչ չը գտնուեց։ Ճշմարտութիւնը երևան եղաւ այն ժամանակ, երբ ջալալցիները արդէն իջել էին սարերից և

գնում էին դէպի ձմերոցները։ Նարօի բարկութեանը և կատաղութեանը սահման չը կար. նա չէր կարող մարսել իւր աղջկայ՝ մահմեդականի կին դառնալը։ Նա ուրախ կը լինէր, եթէ մէկից լուր ստանար՝ թէ Նորա աղջիկը սպանուած է արդէն և մեռել է իւր հաւատքին հաւատարիմ մնալով։ Նարօն տանջում էր իւր կնոջը, մեղադրելով Նորան անհոգութեան մէջ. նա ձանձրացնում և հոգեհան էր անում իւր եղբայր տանուտէր Կօրօին, որի կառավարութեան օրով կարող են օրը ցերեկով աղջիկ փախցնել դիւղից։

Տանուտէր Կօրօն իշխանութեան յայտնեց եղելութեան մասին և այնքան աղմուկ հանեց, որ իշխանութիւնը վճռեց արտակարգ դատ նշանակել այս անցքի մասին։ Գործի մէջ խառնուեցին երկու կողմի աղաներն էլ։ Ցեղական, արիւնի թշնամութեան պատճառով՝ շատ ժամանակ է, որ եղիդ Հասան-աղան, Ամիր-աղան, մահմեդական Իբրահիմ-աղան, Մուսա-աղան, Մահմադ-աղան, և միւս մեծամեծները միմիանց չէին տեսել։ Այժմ նոքա մի տեղ ժողովեցին, որպէս զի իրանք՝ միմիանց մէջ գործը հաշտութիւնով վերջացնեն և դատաստանի չը գցեն։ Հաշտութեան դէմ էր աղջկայ հայրը Նարօն, որը ոչ մի պայման չէր ընդունում. նա համարում էր վիրաւորանքը անբուժելի, յանցանքը անքաւելի։ Երկու կողմից եկած քիւրդերի նպատակն էր կտրել այն գլխագինը, այն բաշըղը, որ պարտաւոր էր Ամօն տալու Նարօին։

—Ես կրօնս չեմ ծախում, որ Նորա մասին սակարկութիւն սկսեմ... գոռաց Նարօն կատաղութեամբ։

—Նարօ՛, ի՞նչ ես անկոտրում մնում. քեզ ասացին, որ աղջիկդ ինքը իւր կամքովն է մնում Ամօի տանը.

—Գլուխը քարը։ Եթէ նա է գործ վճռողը, էլ ի՞նչու էք ինձ կանչել այստեղ։

—Ի՞նչ կարող ենք հիմա անել. եղածը-եղած է. սկսեց խօսել համոզիչ լեզուով Իբրահիմ-աղան. ստացիր՝ մեր վրանաբնակների մէջ ընդունած գլխագինը և բանը վերջանայ։

—Այդ դուք կարող էք ձեր կրօնը փողով գնահատել. իմ կրօնը գլխագնի հաշուի չի գալ, կոպիտ պատասխանեց Նարօն։

—Նարօ՛, ինչո՞ւ ես զուր տեղը խօսում. աղջիկդ քեզ մօտ չի գալու։

—Որովհետև լաւ գիտէ, որ ես կը սպանեմ նորան իմ շէմքից ներս չեմ թողնիլ։

—Ի՞նչ անենք այժմ։ Դու եթէ նորան չես ընդունիլ, էլ ի՞նչ բանի մասին է քո աղաղակը. ի՞նչ է քո ուզածը։

—Իմ կրօնի անպատուութիւնը, իմ խայտառակութիւնը պէտք է սրբուի։ Ես գլխագին, մլխագին չեմ հասկանում։

—Ի՞նչ անենք ուրեմն։

—Ես ի՞նչ գիտեմ. սպանեցէք աղջկաս, սպանեցէք ինձ։

Շարօյին յետ տարան փոքր ինչ հեռու և սկսեցին համոզել, որ նա թողնի իւր ապարգիւն ծայրայեղութիւնը և մոռանի ելքի մասին։ Տանուտէր Կօրօն, որ զանազան գործեր շատ էր ունեցել իւր ձեռքին, նայում էր անցքին աւելի կենսական, աւելի գործնական տեսակէտից. նա աշխատում էր, որ Ամօի կողմից հասանելի գլխագինը որչափ կարելի է մեծ լինի։

—Գիտէք ինչ, իշխաննե՛ր, դարձաւ նա ջալալցիներին. պէտք է հաշտութիւն կայանայ. եթէ նա չը կայացաւ, մեր հոգետանջ թշնամութիւնը, որ այսքան տարի խուլ շարունակւում է, պէտք է նորից բորբոքի։ Դէ, դուք էլ մի այնպիսի բան տուէք, որ Շարօի բերանը փակուի։

—Գլխագինը յայտնի է. մի՞թէ դուք չը գիտէք, պատասխանեց ջալալցի Մահմադ աղան սառն կերպով։

—Դէ, դուք ուղիղ եկել էք մեզ ծաղրելու, բարկացած նկատեց եզիդ Ամիր աղան։

—Լաւ, ձեր ուզածը ի՞նչ է, ասացէք տեսնենք, խօսեցին մի քանի ջալալցի քիւրդեր։

—Ես այսպէս եմ վճռում, սկսեց Ամիր աղան, դուք կը տաք հարիւր գլուխ ոչխար, հարիւր ռուբլի, երեք եզ, մի նժոյգ, հինգ խալաթ (զգեստացու) և մէկ այնալու հրացան։

Ջալալցիները գիտէին, որ գլխագինը շատ են պահանջելու, բայց չէին կարծում՝ թէ մինչև այդ աստիճան կը մեծացնեն նորան։ Իբրահիմ աղան բարկութիւնից ծիծաղեց։

—Հը՛, լաւ էք. լաւ առևտուրի ժամանակ ու տեղ էք գտել. դուք մի քանի տարուայ ծախքը մեզնից էք պահանջում։ Մի աղջկայ պատճառով այսքան աղմուկ, այսքան անբաւականութիւն... Մեր բո-

լորին գործից բանից արիք, հիմա ուզում է՞ք մեզ աղքատացնել։ Ձեր աղջիկն էլ ձեզ լինի, ձեր գլխագինն էլ։ Բան ասացէք՝ բանի նման լինի։ Մեր սովորական քսան ոչխարն որտե՞ղ՝ ձեր նշանակած հարիւրը որտե՞ղ. այդպէս էլ միւս առարկաները։

—Ոչինչ հարկաւոր չէ, ոչինչ հարկաւոր չէ, գուսաց հեռուից Նարօն։

—Նարո՛, դու լռիր, քեզ բան չունես այստեղ, սաստեց Նորան Կօրօն և շարունակեց սակարկութիւնը։

Ամբողջ տասն ժամ խօսակցութիւնը և սակարկութիւնը շարունակւում էր։ Վերջապէս կայացրին հետևեալ վճիռը. Ջալալցիները պարտաւորւում էին հատուցանելու երեսուն գլուխ ոչխար, երեսուն ռուբլի, մէկ եզ, մէկ այնալու հրացանև երեք խալաթ։

Նարօն լսեց այդ վճիռը և ծաղրաբար ասաց.

—Այդ ո՞վ պէտք է տայ, մենք թէ Ջալալցիները։

—Նարո՛, հանգստացիր, հանաքը դէն դի՛ր։

—Հանաք չեմ անում, մեր գիւղում հիմա շուտով մարդու տալու մէկ յիսուն աղջիկ կ՝լինի. թող Ջալալցիները պատրաստեն յիսուն գլխագին ու գան մեր եզիդ էգէրին տանեն՝ մահմեդական շինեն։ Դինը յայտնի է. էլ ի՞նչ ենք երկար մոռածում։ Վերևից տեսնող կայ. նա ի՞նչ կասի. նա համաձայն կը լինի՞ այդ գնին։ Ես համաձայն չեմ. ինձ հարկաւոր չեն ո՛չ իմ աղջիկը և ոչ Նորա գլխագինը. կորչեն գնան։

Նարօն հրաժարւեց խօսակցութիւնը շարունակելուց. նստեց իւր ձին և հեռացաւ։ Պատգամաւոր աղաները և ներկայացուցիչները գործը վերջացրին առանց Նարօի։ Կօրօն յանձն առաւ, որ բոլորին հանգստացնի և գլխագինը հատուցանելու նշանակեց պայմանաժամ միայն երեք օր։ Թէև Ջալալցիները չէին կամենում այդքան կարճ ժամանակամիջոցում կատարել խոստումը—ընդունեցին այնու ամենայնիւ պայմանաժամը։

Երեք օրից յետոյ գլխագինը բերւեց։ Նարօն գիտէր, որ գլխագինը պէտք է գայ, առաւօտը վաղ վերկացաւ, նստեց իւր ձին և գնաց Կողրի կողմերը։ Նորա կինը, թէև շատ սիրում էր աղջկանը, այնու ամենայնիւ հաշտւեց իւր վիճակի հետ և կաշառւեց մեծ գլխագնից։ Ընծաները ընդունեց և ողջոյն ուղարկեց իւր աղջկան։

Նարօն դարձաւ տուն երկու օրից յետոյ բաւականին հանգստացած։ Նա չ՝ընդունեց գլխագինը։ Հրամայեց իւր բացակայութեամբ ծախել ոչխարները, փող շինել, կցել միւս գումարի և իրեղէնների հետ և պահեց անձեռնմխելի։ Երբ որ լսեց, որ իւր հոտում. այլ և ս չը կայ գլխագնի մէջ եկած ոչխարների հետքը, նա սկսեց մոռնել իւր ունտեսութեան շրջանը և զբաղուել առաջւայ նման իւր գործերով։

Աննկատելի կերպով անցաւ ձմեռը և հասաւ գարունը։ Ջալալցիները պէտք է նորից բարձրանային Սինակի լեռները։ Նարօի կինը մի քանի անգամ իւր մարդու ականջն էր գցել, որ պէտք է գնայ իւր աղջկայ տեսութեանը. բայց նա կամ չը լսելու էր դրել, կամ կոպիտ պատասխանել էր՝ թէ նա աղջիկ չունի։ Ցունիսի սկզբներին վերջապէս Նարօի կինը ստացաւ իւր մարդուց մի այս տեսակ պատասխան.

—Գնում ես գնա՛. ականջս մի տանիլ. բայց նորա ոտքը իմ տանը երբէք չի լինելու. այդ իմացած լինես. ես նորան կը սպանեմ։

III

Խանէի և Նորա մօր միմիանց հետ տեսնուելը շատ սրտաշարժ էր։ Խանէն ոչ միայն իւր մօրն էր տեսնում, այլ և մի տեսակ թողութիւն էր ստանում—իւր ընդունած գրութեան համար։ Նա լաւ գիտէր, որ հայրը չի ներում Նորան և չի ուզում լսել Նորա անունը. Նա դիշերները ծածուկ լաց էր լինում. բայց նա վախենում էր, որ մօր տեսութիւնից էլ զրկուի։

Մօր գալու լուրը համարեա խելագարցրեց Խանէին։ Նոցա գրկախառնութիւնը այնպէս էր, որ կարծես մեռած տեղից կենդանացրել են մարդկանց և միմիանց հանգիստ տրել։ Խանէն համբուրում էր մօր կուրծքը, շլինքը, մօր ձեռքերը։ Ամեն փոքր ինչ խօսաց իւր զոքանչի հետ և դուրս եկաւ տնից, ազատ թողնելով իւր կնոջը Նորա հետ։ Ամեն ձի նստաւ և կնոջը ասաց, որ ուշ կը վերադառնայ, կամ գիշերը, կամ միւս օրը։

Խանէն պատմեց մօրը իւր գլխին եկած անցքերը՝ փախցնելու ժամից մինչև այդ օրը։ Մայրը լսում էր ուշադրութեամբ՝ յաճախ արտասուելով։ Կրօնը փոխելու մասին խօսելուց նա տանջւում էր և կցկտուր կերպով էր արտայայտում իւր միտքը։

—Ես չը գիտէի սկզբում, մա՛յր. թէ ինձ փախցնողը մահմեդական է. բայց իմանալուց յետոյ՝ էլ ի՞նչ պէտք է անէի։ Կամայակամայ պէտք է ընդունէի նոցանը, գոնէ երեսանց։ Ես մեր կրօնը սիրում եմ առաջուայ պէս. բայց նոցա կրօնին էլ դէմ չեմ։ Ամէն ինձ կրօնի մասին չի խօսացնում և ինձ պաշտպանում է ուրիշներից։ Մի օր, դեռ մի ամսուայ հարս էի, մի փոքրիկ վէճ ունեցայ մեր հարևանի կնոջ հետ. ես նորա վերայ բարկացայ. նա իմ. ես նորան շար անուանեցի, իսկ նա, որ չ՚տարաւ բերաւ ու ինձ անուանեց այն այն... ինչ որ, մա՛յր, եզիդի կրօնում երբէք բերանից չի դուրս գալիս [1]), ես մի բոպէում կատաղի վագր դարձայ, յարձակուեցի վերան, շորերը պատռտեցի և իրան ջարդեցի։ Ամէն աղմուկի վերայ ներս թռաւ ու տեսնելով ինձ կատաղած՝ յետ տուաւ։ Ամէն ուզում էր վերաս բարկանալ. բայց տեսնելով իմ կատաղած երեսս՝ հանդարտ բռնեց և տարաւ տուն։ Ես նորան յայտնեցի, որ ինքս իմ տէրը չեմ այդպիսի դէպքերում. թող նախազգուշացնի իւր հարևաններին։ Մի անգամ էլ հովի կինը հարևանի վրանում խօսելուց իմ մասին՝ ակնարկ արաւ թէ «այն ինչ»-ի ճուռը շատ է հրամայաբար խօսում. ես հասկացայ, որ իմ մասին է, վեր առի քարը ու շպռտեցի նորա վերայ. լաւ է, որ քարը չը գիպաւ, և առանց աղմուկի անցաւ բանը։ Այնուհետև զգուշացան և իմ ներկայութեամբ էլ չեն թոյլ տալիս իրանց բերանին եկածը դուրս տալ։ Եթէ իմ՝ կրօնից շեղուել եմ, գոնէ իմ նոր կրօնումը թոյլ չեմ տալիս, որ վիրաւորանք հասցնեն իմ հին կրօնին։ Երբ որ լսում եմ այն սարսափելի խօսքը, ես ինձ կորցնում եմ ու գիժուում եմ։ Ցեռոյ խելքս ժողովելով տեսնում եմ, որ շատ եմ գրգռուել զուր տեղը։

Մայրը ցանկացաւ իմանալ, թէ արդեօք աղջիկը գոհ է իւր ամուսնուց, իւր բոլոր վիճակից։ Խանէն այդ հարցից փոքր ինչ տխրեց.

—Մայր իմ, գոհ եմ, շատ գոհ եմ վիճակիցս, գոհ եմ եղել իմ ամուսնուց. նա ինձ այնպէս է սիրել, ինչպէս գուցէ ոչ ոք իւր

---

[1]) Եզիդները յարգում են սատանային և երբէք նորա անունը չեն տալիս. եզիդի մօտ արտասանել «սատանայ» բառը—նշանակում է նորան վիրաւորել։

կնոջը։ Նա ինձ թագուհու պէս է պահել. և նորա սէրն է, որ ինձ կաշառել է, ինձ այստեղի վերայ տաքացրել է. բայց...

—Ի՞նչ կայ, հարցրեց մայրը փաղաքշանքով.

Խանէն արտասուեց և լռեց.

—Ի՞նչ կայ, աղջի, կրկնեց մայրը վրդովուած։

—Ոչինչ, մայր. ոչինչ չը կայ. բայց իմ սիրտը վատ բան է դուշակում։

—Ի՞նչ է պատահել. մի պատճառ ունես, թէ դարդակ երազներ ես տեսել։

—Ամբողջ ձմեռը մարդս մի գիշեր ինձ մենակ չէ թողել, երկայն ժամերով ինձնից չի հեռացել, բայց այս սարերը գալուց յետոյ—նա ամբողջ օրերով կորչում է։ Անցեալ օրը պատմում էր, որ մի քարվան են կորել և կողոպուտի մի մասն էլ, որ իրան էր հասել բերել էր տուն. քաջ տղամարդ է, ինչ ասեմ։

—Լաւ, էլ ի՞նչ տխրելու բան կայ. աղջի.

—Էհ, մայր, ամեն բան ասել մի տալ։

—Դէ, դու գիտես, աղիզ ձագս, մի ասիլ. բայց այն էլ իմացի՛ր, որ քու հիմիկւայ դրութիւնդ կարող է քեզ տխրութեան բերել, դա յղի կանանց մէջ պատահում է։

—Քո ասածը լինի, նկատեց կամացուկ Խանէն և լռեց։

Մայրը երկու օր հիւր լինելուց յետոյ՝ դարձաւ գիւղ, իրանց տունը։ Խանէն տխրութեամբ բաժանուեց իւր մօրից։ Նա խնդրեց, որ էլի աշխատի մի կերպ աղջկան այցելելու, նա մանուանդ, որ մի քանի շաբաթից յետոյ՝ նա պէտք է անկողին մտնի։

Այդ օրից հաղիւ անցել էր երեք շաբաթ։ Նարօի կինը յետ էր դառնում առուից, ուր գնացել էր լաւդք անելու, մէկ էլ տեսաւ հեռուից մի ձիաւոր, որ արագ արագ շտապում էր դէպի նոցա գիւղը։ Նա հեռաքրքրուեց, կանգնեց կալի մօտ և սկսեց դիտել ձիաւորին։ Ահա նա մօտենում է. բայց ձիու վերայ նստածը տղամարդ չէ, այլ կին. նա զարմացաւ. այդ ձին նման էր Ամօի ձիուն, որով ինքը եկել էր իւր աղջկայ մօտից. և ձիու վերայ նստածը—չ՝լինի թէ իւր աղջիկն է։ Այո, նա է. նորան նման է. բայց ի՞նչու է միակ. ինչո՞ւ

է այդպէս խելքը կորցրածի պէս վազեցնում՝ ձին։ Խեղճ կինը շշկրլուեց. վազեց գէպի ձիաւորը. և տեսաւ, որ իսկապէս Խանէն է։

—Խանէ, Խանէ, կանգնացրու ձիդ։

Խանէն հազիւ հազ կարողացաւ զսպել իւր ձին։

—Ո՞ւրտեղից ես գալիս, աղջի, ինչո՞ւ ես մենակ, հարցրեց մայրը սարսափած՝ Խանէի գունատ և ծուռած երեսից։

—Ամոին սպանեցի ու եկայ, ասաց խղդուկ ձայնով Խանէն և իջաւ ձիուց։

—Ի՞նչ ես ասում, Խանէ։

—Մայր, ոտքի վերայ կանգնել չեմ կարողանում, շուտ ինձ տուն տար. ամեն բան կը պատմեմ։

Մայրը հասցրեց աղջկան տուն, տեսաւ, որ նա բոլորովին հիւանդ է, պատրաստեց անկողին և պառկացրեց նորան։ Խանէն անզգայ և տենդային դրութեան մէջ պառկեց մի քանի ժամ։ յետոյ սկսեց ցաւեր զգալ. մայրը հասկացաւ, որ երկունք է սկսել և հոգաց, ինչ որ հարկաւոր է։

Շարոն եկաւ տուն խոտահարքից և զարմացաւ իւր տան մէջ կատարուող իրարանցումի վերայ։ Իմանալով Խանէի գալուստը՝ նա շատ բարկացաւ։ Նորա կինը դուրս եկաւ նորան հանգստացնելու։

—Շարո, սուս կաց. Խանէն ծննդի վերայ հիւանդ է։

—Թող կորչի նա իմ տնից, գոռաց անգթաբար Շարոն, իմ տանը մահմեդական չը պէտք է ծնուի։

—Շարո, խղճա աղջիկդ է։

—Նա մահմեդական երեխի մայր է։

—Ի՞նչ անէր, ո՞ւմ տուն գնար, ո՞ւմ դիմէր.

—Ուրտեղից եկել է, այնտեղ էլ գնայ։

—Սպանել է Ամոին ու եկել շտապով։

—Ի՞նչ. ե՞րբ։

—Ինքս էլ չը գիտեմ. հիւանդ է. չի կարողանում խօսել.

—Հիմի այդ էր պակաս, նոր աղմուկի մէջ է՞ ուզում գձել մեզ։

—Շարո, քեզ մատաղ, դու մէկ սուս կաց։

Շարոն դուրս եկաւ տնից և գնաց Կօրօի մօտ՝ գիշերը անցկացնելու։

Առաւօտը կինը եկաւ, տուն կանչելու. Շարոն դիմադրում էր.

բայց յետոյ զիջեց. Նորան սկսել էր հետաքրքրել իւր աղջկայ արարքը։

Խանէն հօր սառն աչքերը տեսնելուն պէս ուշաթափուեց. Նարօն խղճաց աղջկան, մօտիկացաւ, ուշքի բերեց։

—Ինչ է պատահել Խանէ, ասա տեսնենք, երկմտութիւնից դուրս գանք։

—Ամօին սպանեցի։

—Ինչո՞ւ։

—Որովհետև... հայր, մայր, ինչ ուզում էք արէք, բայց ինձ միք հեռացնիլ այստեղից։

Մի քիչ թոյլ տուէք հանգստանամ, յետոյ կը պատմեմ բոլորը։

Մի քանի ժամից յետոյ, երբ Խանէն հանգստացաւ, պատմեց կարճ կերպով իւր կատարած սպանութիւնը։

—Ես պատմեցի քեզ, մայր, որ Ամօն վերջին ժամանակները ինձ սկսել էր մոռանալ, ինձ օրերով մենակ թողնել։ Ես չէի տխրիլ եթէ լսած լինէի, որ միայն քաւան է կտրում. այլ ինձ լուրեր էին հասնում, որ աղջիկներ էլ է գերում. զանազան կասկածաւոր գրօսանքների է գնում։ Ես տեսնում էի հարևանու հիներիս քմծիծաղը, նոցա վիրաւորիչ ակնարկները։ Է՛հ, երկայն է պատմելը։ Տանջւում եմ, տանջւում, Ամօին ես տեսել էի մի անգամ սիրտս և նորանով էի ապրում։ Հա՛յր, մի խոժոռիլ դէմքդ, Ամօն էլ չը կայ աշխարհումս։

—Նարունակիր, խօսքդ ասա, ասաց լրջութեամբ Նարօն։

—Վերջին օրը, շարունակեց հիւանդը, Ամօն պատրաստւում էր դարձեալ՝ ուր որ գնալու։ Ես խնդրեցի, որ տնից չը գնայ, որովհետև ես ինձ տխուր և փոքր ինչ թոյլ էի զգում. բայց Ամօն ականջ չը դրաւ։ Որչափ աղաչեցի, պաղատեցի. նա չ՝զիջեց և կարծես աւելի ու աւելի յամառեց։ Ես լաց եղայ. կարծես մի վատ բան էի զուշակում, երդւեցրի նորան սիրովս. նա կոպիտ ինձ պատասխանեց, որ տղամարդը կնկայ երդումների ստրուկ չի կարող լինել։ Զին թամքելուց յետոյ՝ եկաւ զէնքերն էլ առնի։ Ես վիրաւորուած էի. չ՝դիտէի ինչ անեմ. մօտեցայ Ամօին, որպէս զի մի որ և է բան խլեմ նորանից ու այգպիսով յետ պահեմ նորան։ Աչքիս ընկաւ դաշոյնը, որ և խլեցի նորանից։ Ամօն բարկացաւ, սիրթնեց և ուզեց ամենախիստ կերպով սիրտս ծակել. նա մի զարհուրելի հայեացք

ձգեց վերաս ու աղաղակեց. «Դէ ինձ մի նեղացնիլ, այն ինչի... զարմ։ Այդ բանը երբէք Նորանից չէի սպասում։ Այդ բառից զարզանդուեցի, դողացի և ինքս էլ չը գիտեմ ինչպէս՝ յանկարծ յարձակուեցի վերան ու ուրս կոխեցի Ամոի սիրտը։ Նա ընկաւ. իսկ ես թռայ պատրաստուած ձիու վերայ և քշեցի ձին դէպի այն տարը, ուր տեղով մի երեք շաբաթ առաջ քեզ ճանապարհ էի գցել, մայր։ Ձին երեւի ծանօթ էր ճանապարհին, որովհետև ես քիչ էի կառավարում Նորան. նա ինքը՝ կարծես զգում էր, ուր պէտք է ես գնամ։ Լաւ է, որ այստեղ դուրս եկայ, չը մոլորուեցի։ Մա՛յր, երբ ես քեզ տեսայ գիւղի ծայրին, մտածեցի լռեմ, ոչինչ չը պատմեմ քեզ. բայց ես ինքս իմ տէրը չէի. առաջին խօսքս հէնց սպանութեան մասին էր. օ՛հ, օ՛հ, խեղճ իմ գլուխ... չեմ կարողանում խօսել. օ՛հ, անբաղդ հի ծնուած աշխարհումս։

Խանէն յօդնեց ու լռեց. բայց ըստ երևոյթին հանդարտուեց։ Պատմելը թեթևացրեց Նորան և նա մի երկու ծանր ախ քաշելուց յետոյ՝ պատկեց հանդիստ։

Շարոն լսեց աղջկայ պատմութիւնը, զգացուեց, փոքր ինչ մտածեց և յետոյ դիմելով աղջկան թէև հանդարտ, բայց խիստ լրջութեամբ ասաց.

— Այդ այսպէս է, բայց իմ տունը մահմեդական երեխայ իրաւունք չունի ապրելու։ Քո գլխագինը ես չեմ շարժել. յատկացնում եմ այն էլ քո երեխի համար գործ ածես։ Նորան մեծացրու. բայց իմ տնից հեռու... իմ տունը պէտք է մաքուր մնայ։

Կինը և աղջիկը շարուեցին։

Գնացին կանչելու Գօրոյին, որ աշխատի Շարոյին հանգստացնելու։ Խանէն մոռացաւ իւր ցաւը. Նորա հօր դէմքը Նորան սարսափեցրեց.

— Հա՛յր. ի՞նչ է իմ մեղը, որ ես տանջւում այսքան։ Մի՞թէ ես մի բան կարող էի անել և չ՚արի։

— Այո՛, կարող էիր անել. դու պէտք է փախչելուդ առաջին օրը՝ սպանած լինէիր կամ քեզ՝ կամ Ամոին. իսկ դու կեանքը վեր ես դասել քո խղճմտանքից։

— Հա՛յր։

— Քարափներ շատ կային, սուր շատ կար. ամեն տեղ մահ կարող էիր գտնել։

— Հա՛յր, հա՛յր, աղաղակեց Խանէն և ուշաթափուեց։

— Այժմ թող ապրի. նա իւր տանջանքով քաւեց մասամբ իւր մեղքը. բայց մահմեդական ծնո՞ւնդ... Շարոն չ՚վերջացրեց իւր խօսքը և այլայլած մտատանջ երեսով դուրս եկաւ տնից։